



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2017 թվականի № _____ Ն
քաղ. Երևան

**ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԱՅԻՆ ԵՎ ՀԵՏՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ,
ՎԵՐԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 2-րդ կետի «ը» և «իե» ենթակետերը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորը բաժանորդների կանխավճարային և հետվճարային հաշիվների համալրումը, վերալիցքավորման քարտերի վաճառքը, ինչպես նաև հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների դիմաց վճարումների ընդունումն այլ անձանց պատվիրակելու դեպքում կնքվող պայմանագրերի շրջանակում ապահովում է՝
 - 1) բաժանորդների կանխավճարային և (կամ) հետվճարային հաշիվների համալրումն այն գումարների լրիվ չափով, որոնք վճարվում են նշված հաշիվները համալրելու (դրանց գումարներ փոխանցելու) համար.
 - 2) բաժանորդներին վերալիցքավորման քարտերի վաճառքի իրականացումն այն անվանական գներին համարժեք չափով, որոնք նշված են վերալիցքավորման քարտերի վրա.
 - 3) բաժանորդներին մատուցվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների դիմաց վճարումների ընդունումն այդ ծառայությունների սակագներին համարժեք գումարների չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ